ՀՀ Կառավարությանը՝ հանձին վարչապետ
Նիկոլ Փաշինյանի
Վայոց Ձորի մարզի բոլոր համայնքներին՝
հանձին համայնքների ավագանիների

Հանրագիր

Հարգելի պրն. վարչապետ, ՀՀ կառավարության անդամներ, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ,

Վայոց Ձորի մարզը՝ լինելով տարածքով և բնակչությամբ ամենափոքրը, Հայաստանի այն յուրահատուկ տարածքներից է, որտեղ միաժամանակ հանդիպում են տափաստանային, անտառային և ալպիական էկոհամակարգերը, որոնց մի մասն արդեն իսկ ունի հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ: Այս մարզը մեր երկրի հիմնական ջրային հարստությունը՝ Սևանա լիճը սնող ու վերականգնող աղբյուրն է և Հայաստանի ողջ տարածքի համար ունի ջրային ռազմավարական նշանակություն և՛ որպես ջրհավաք ավազան, և՛ ջրային կարևորագույն ենթակառուցվածքներ ունեցող մարզ՝ Որոտան-Արփա-Սևան ջրատար թունել, Կեչուտի, Հերհերի ջրամբարներ և այլն:

Վայոց Ձորի տնտեսության հիմքում հողն ու բնությունն են՝ գյուղանտեսություն, անասնապահություն, գյուղմթերքի վերամշակման ձեռնարկություններ, խաղողագործություն, գինեգործություն, հանքային և խմելու ջրերի արտադրություն, (էկո)տուրիզմ, էկոլոգիապես մաքուր վայրի դեղաբույսերի հավաքում, առողջարաններ և այլն: Խորհրդային շրջանից պահպանվել են քիչ թե շատ գործող տեխնոլոգիական հիմնարկներ, որոնք կարող են հիմք դառնալ նորարությունների հենքով արտադրությունների զարգացման համար:

Միաժամանակ, մեր մարզում ստեղծվել են տնտեսական այնպիսի ապրանքանիշեր՝ բրենդեր, որոնք ներկայացնում են ողջ Հայաստանը՝ Ջերմուկ հանքային ջուրը, Ջերմուկ առողջարանային քաղաքը և Արենին՝ որպես գինու արտադրության, խաղողի մշակման ու հնագիտական տուրիզմի կենտրոն:

Մարզի ներկայիս տնտեսական հենքը կարող է վերանալ, եթե մեր մարզում զարկ տրվի մետաղական հանքարդյունաբերությանը: Այս պահին մարզում ընթանում են 2 մետաղական հանքերի ստեղծման գործընթացներ. առաջինը Գլաձորի բազմամետաղային հանքն է, որը Գլաձոր համայնքի դիմադրության և ավագանու որոշման շնորհիվ կասեցված է, և ընթանում են դատական գործընթացներ, իսկ մյուսը չափսերով և բացասական ազդեցությամբ Գլաձորին հարյուրավոր անգամներ գերազանցող՝ Ջերմուկի մոտ գտնվող Ամուլսարում ոսկու հանքի հնարավոր շահագործումն է:

Մետաղական հանքարդյունաբերությունը ոչ մի կերպ չի կարող զարգացնել մեր մարզի տնտեսությունը. եթե նույնիսկ այն կարճաժամկետ կտրվածքով ապահովի որոշակի հարկային եկամուտներ, ապա այդ նույն կարճ ժամկետում կազմաքանդելու է արդեն իսկ բնականորեն կազմավորված տնտեսական համակարգը, իսկ հետագայում հանգեցնելու ահռելի ծախսերի՝ կապված սոցիալական ու բնապահպանական ավերիչ ազդեցության հետ: Իրականում հանքարդյունաբերության ծախսերի և օգուտների հարաբերակցությունը հաշվարկված չէ, մենք զրկված ենք դրա թողած ծախսերի մասին վերլուծություններից, սակայն մեր աչքի առջև ունենք Հայաստանի այլ վայրերում հանքարդյունաբերության դառը փորձը: Մենք չենք ցանկանում դառնալ Լոռվա Թեղուտը, Ախթալան, Ալավերդին, Սյունիքում՝ արդեն իսկ դատարկված Դաստակերտը, հիվանդացությամբ Հայաստանում առաջինը համարվող Ալավերդին, Քաջարանը կամ Կապանը:

Նախատեսվող մետաղական հանքարդյունաբերությունը ներառում է Ջերմուկ քաղաքը և ամբողջ Արփա գետի հովիտը, Եղեգնաձոր և Վայք քաղաքները և դրանց հարակից գյուղերը: Այս ծրագրերի գնահատման ժամանակ չի ներառվել նրանց ազդեցությունը ողջ մարզի կտրվածքով, ոտնահարվել է մեզ վրա ազդող որոշումների կայացմանը մասնակցելու մեր իրավունքը:

Մեր այս դիմումով մենք առաջարկում և պահանջում ենք.

1. Կառավարության մակարդակով ընդունել ՀՀ Կառավարության որոշում, իսկ համայնքների մակարդակով՝ ավագանիների որոշումներ, որոնցով կամբողջացվեն նախկինում ընդունված ռազմավարությունները՝ կապված Վայոց Ձորի մարզի տնտեսական զարգացման հետ՝ բացառելով մետաղական հանքարդյունաբերության հեռանկարը, և մարզը կճանաչվի կանաչ և էկո տնտեսական տարածք, որտեղ պետք է զարգանան էկոլոգիապես մաքուր և բնական գյուղատնտեսությունը, գյուղմթերքի վերամշակումը, տուրիզմը և նորարական տեխնոլոգիաներով հագեցած ու բնությունը չվնասող արտադրությունները:
2. Այս որոշումն ի կատար ածելու համար դադարեցնել բոլոր տեսակի մետաղական հանքերի հնարավոր գործարկումները, այդ թվում՝ դադարեցնել նոր երկրաբանական հետախուզությունների գործընթացները և վերանայել արդեն իսկ տրամադրված լիցենզիաներն ու դրական եզրակացությունները՝ հաշվի առնելով դրանց տրամադրման ընթացքում Վայոց Ձորի բնակիչների կարծիքը հաշվի չառնելն ու բացասական ազդեցության թերհաշվարկները: Խոսքը, մասնավորապես, Ամուլսարի և Գլաձորի հանքարդյունաբերական ծրագրերին է վերաբերում:
3. Մշակել Վայոց Ձորի էկո և կանաչ տնտեսության զարգացման համալիր ծրագիր, որի իրականացման համար մենք պատրաստ ենք աջակցել ՀՀ կենտրոնական ու տեղական կառավարման մարմիններին:
4. Վերանորոգել միջպետական ճանապարհը՝ որպես ռազմավարական ճանապարհ, ինչպես նաև միջհամայնքային ճանապարհները, որպես տնտեսության խթանման համար անհրաժեշտ միջոց:

ՀՀ կառավարությանը, Վայոց Ձորի մարզի համայնքների ավագանիներին՝
ՀՀ Վայոց Ձորի մարզը կանաչ և էկո տնտեսական տարածք դարձնելու և մարզում մետաղական հանքարդյունաբերությունը արգելելու հանրագրի մասնակիցներ

Անուն, ազգանուն	**Համայնք**	**Ստորագրություն**

ՀՀ կառավարությանը, Վայոց ձորի մարզի համայնքների ավագանիներին՝
ՀՀ Վայոց Ձորի մարզը կանաչ և էկո տնտեսական տարածք դարձնելու և մարզում մետաղական հանքարդյունաբերությունը արգելելու հանրագրի մասնակիցներ

Անուն, ազգանուն	Համայնք	Ստորագրություն

ՀՀ կառավարությանը, Վայոց ձորի մարզի համայնքների ավագանիներին՝
ՀՀ Վայոց Ձորի մարզը կանաչ և էկո տնտեսական տարածք դարձնելու և մարզում մետաղական հանքարդյունաբերությունը արգելելու հանրագրի մասնակիցներ

Անուն, ազգանուն	Համայնք	Ստորագրություն